

# ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՇՐՋԱՓԱԿՈՒՄ

## ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ՎՐԱՍՏԱՆ ԳԱՅԱԾ Է



Երկուշաբթի առտու, Օգոստոս 31-ին, Երևանին հեռաձայնով մեր առած լուրերը, անդամ մը եւս խրախուսիչ չէին, ինչ կը վերաբերի երկրին անտեսական վիճակին, չըջափակուած ամբողջական լլվալով, ոչ մէկ սահմանէ ապրանք կը մտնէ Հայաստան: «Արմէնփրէս» կը հաղորդէր (Օգոստոս 29) որ արտակարգ ծանր վիճակ ստեղծուած էր Հանրապետութեան մէջ հացի կապակցութեամբ: Հակառակ անոր որ հացահատիկի զնումները ատենին կատարուած են անհրաժեշտ քանակութեամբ, Վրաստանի ծանօթ դէպքերը պատճառ են որ երկաթուղին ալ չքանի եւ ինչպէս ըսինք, ոչ մէկ փոխադրութիւն կը կատարուի: Իշխանութիւնները կը ջանան Պաթումի ճամբով հացահատիկ բերել: Այս մասին հեռատեսիլէն ելոյթ ունեցած է վարչապետ Խոսրով Յարութիւնեան եւ ալ պաշտօնական անձեր ալ կ'արտայայտուին: Մնաց որ խուճապի պատճառը հետեւանք է նաեւ չարագործներու գործունէութեան, որոնք զանազան միջոցներով կացութիւնը կը վատթարացնեն: Օգոստոս 31-ին մեզի ըսուեցաւ թէ այլեւս ամէն ինչ կարգադրուած է եւ նոյն առաւօտը հաց կար խանութները:

Շրջափակման հետեւանքով, ծանր կացութիւն ստեղծուած է նաեւ վառելանիւթի համար եւ Զուարթնոց օդակայանը թռիչքներու մեկնումը յետաձգուած է եւ ճամբորդներ խոնուած են: 14 վաղոն վառելանիւթ Վրաստան կը մտնի: Ռուսական բանակի հայթայթած վառելանիւթը թոյլ տուած է որ ապահովուին կարեւոր նկատուած թռիչքները:

Ի դէպ, Շարաթ օր, Օգոստոս 29-ին երեք հոգինոց պատուիրակութիւն մը բաղկացած՝ Սէյրան Պաղտասարեանէ, Աշոտ Բլէեանէ եւ Ռոպէր Մնացականեանէ, որոնց կ'ընկերանայ լրագրող մը, Թիֆլիս մեկնած էր, ուրիշ պիտի անցնէր Աբխազիա եւ Երեւան վերադառնար Երկուշաբթի իրիկուն, խօսակցութիւններ ունենալու եւ լուծում գտնելու համար: Աբխազիոյ Հայերը կը փորձեն հեռանալ, բայց ճամբաները շատ վտանգաւոր են: Զոհեր կան հայ զաղութիւն մէջ, թիւը կարելի չէր եղած ճշդել տակաւին: Հայաստանի Խորհրդարանի նախագահութիւնը յայտարարութեամբ իր մտահոգութիւնը յայտնած էր արդէն Աբխազիոյ Հայերու նկատմամբ, որոնք բռնութիւններու զոհ կ'երթան:

\*\*\*

Ինչ կը վերաբերի Ղարաբաղի կացութեան, մարտեր ու ուժբախտութիւններ կը շարունակուին նոյն ձեւով: Սկզբունքով, Անպտեմբեր 1-էն պէտք է գործադրուի Ալմա - Աթա գոյացած համաձայնութեամբ հրադադարը: Մարտակերտի շուրջ զիրքերու կռիւները նոյն մակարդակի վրայ են:

Օգոստոս 28-ի գիշերը շարունակուած է Զանգեյրանի չըջանէն Կապանի ուժբախտութեամբ, որու հետեւանքով չորս մեռեալ կայ:

Բորիս Թումանով կ'անդրադառնայ հրադադարի որոշումին «Լիպր Պելժիֆ»-ի մէջ (Օգոստոս 29) եւ շատ լաւատես չէ լինելու առնչութեամբ: Կը նկատէ որ Ղարաբաղի ներկայացուցիչներու բացակայութիւնը Ալմա - Աթա յստակօրէն կը օգնուի որ Հայաստան ընաւ փափաք չունի քաջալերելու Ղարաբաղցիներու անկախապաշտ ձգտումները: Բայց եւ

այնպէս ոչ Հայաստան, ոչ Ղարաբաղ այլեւս կը դռհման «մշակութային ինքնավարութեամբ»: Կը մնայ հաշուել մարդկային տարրին վրայ, քանի ինչպէս ըսեր է ազրբեջանցի պաշտօնական անձնաւորութիւն մը «ամէն մարդ մահացու կերպով յողնած է այս պատերազմէն»:

### ՔՐՏԱԿԱՆ

#### ՇԱՐԺՈՒՄԸ ԿԸ ԾԱԻԱԿԻ

Թուրքիոյ նախարարներու Խորհուրդը արտակարգ նիստ մը դումարած է Տիգրանակերտի մէջ, օրակարգի վրայ ունենալով քրտական զինեալ ուժերու դէմ միջոցառումներու հարցը: Հանրապետութեան նախագահին ղեկավարութեան տակ գումարուած նիստին որոշուած է սահարեկիչներու ղեկավարներուն եւ ՓՔԲ-ի պարադըլուս Ա. Էօճալանի դէմ կիրարկել խրայէլեան մեթոտը. այսինքն՝ զանոնք հրացանազարկ ընել ուր որ յայտնուին. կը տեղեկացուի որ այս մեթոտը Իսրայէլ-գործադրած է Պաղեստինցիներու դէմ ու զրական արդիւնքներ առած:

Միւս կողմէ ՓՔԲ կը շարունակէ իր խափանարարութիւնները. Օգոստոս 28-ին Ատանայի մէջ հեռարձակ զէնքերէ կրակ բացած են սաւառնակի մը վրայ, իսկ յաջորդ օրը Պոլսոյ Գարաբիւղ նաւամատոյցը գտնուած շոհեմալ մը հրդեհած են: Երկու պարագային ալ մարդկային զոհեր չեն եղած, սակայն խնդրոյ առարկայ նաւը վառած է ամբողջութեամբ ու անգործածելի դարձած: Այլ վայրերու մէջ եւս սպանութեան դէպքերը, պայթումները կը շարունակուին:

Օգոստոս 30-ին Իրաքի եւ Իրանի սահմանակից Հաքքեարի Եճմտինլին գաւառակին մէջ քիւրտ զինեալներու եւ թուրք ապահովութեան ուժերու միջեւ բախումի մը ընթացքին, ըստ թրքական ազրիւրներու, տասը ժանտարմ եւ աւելի քան 50 Գիւրտեր սպանուած են: Բախումը հետեւած է սահմանային պահակազօրքի մը վրայ քիւրտ զինեալներու յարձակումին:

### ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՍԱՐԱՅԵԻՑ աւելի քան երեք սեւ օր մը ապրեցաւ Կիրակի, Օգոստոս 30-ին, երբ կրակ բացուեցաւ շուկային վրայ եւ անմիջական հետեւանքն էր՝ 15 մեռեալ եւ տասնեակներով վիրաւորներ, որոնց մէջ յուսահատական պարագաներ: Այս կը պատահի Լոնտոնի Ժողովին վաղորդայնին, ուր խոստումներ եղան...

ԼԻԲԱՆԱՆԻ ընտրութիւններուն երկրորդ շրջանը տեղի կ'ունենար Օգոստոս 30-ին արեւելեան - Պէյրութ եւ լեռնային Լիբանան: 115 թեկնածուներուն մէջ, պէտք է ընտրուէին 19 քրիստոնեայ եւ մահմետական երեսփոխան (Պէյրութ) եւ 30 մնացեալ շրջանները: Այս անգամ ալ մեծամասնութիւն կազմեցին ձեռնպահները: Մանուէրի Պատրիարքը՝ Սֆէյր «խեղկատակութիւն» որակեց ընտրութիւնները եւ սպաննացած է՝ «Ժողովրդավար բացասական սօյքօթ» մը եթէ կառավարութիւնը չեղեալ չհռչակէ: Կը թուի որ մասնակ